ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 6 հոկտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Մ. Թոփուզյանի

Քննության առնելով քաղաքացի Արմենուհի Միքայելյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Արմենուհի Միքայելյանը 2010թ. սեպտեմբերի 17-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 8-րդ եւ 31-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վիճարկվող 445-րդ հոդվածը վերաբերում է նախնական պայմանագրին՝ դրա կնքման պայմաններին ու կարգին: Դիմողի կարծիքով, նշված հոդվածը չի սահմանում նախնական պայմանագրի կնքման համար բավարար հստակ ձեւակերպված ընթացակարգ, ինչը հանգեցնում է փվյալ իրավական նորմի որոշակիության բացակայությանը:

2. Դիմումին կցված դատական ակտերի եւ դիմողի փաստաթղթերի համալիր վերլուծությունը վկայում է, որ տվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Այսինքն՝ վերոնշյալ դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարցը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետեւաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Արմենուհի Միքայելյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝
Անդամներ՝

6 հոկտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-31